

ՏԵՂԵԿԱՆՔ

Լոռու մարզի արդյունաբերության ոլորտի 2013թ. հունվար-ապրիլ ամիսների
աշխատանքների մասին

2013 թվականի հունվար-ապրիլ ամիսներին մարզի արդյունաբերական ձեռնարկությունները ընթացիկ (գործող) գներով թողարկել են 20,889.26 միլիոն դրամի արդյունաբերական արտադրանք 2012 թվականի համապատասխան ժամանակաշրջանի 19,801.08 մլն դրամի դիմաց՝ աճի տեմպը կազմել է 105.5%, բացարձակ աճը՝ 1,088.18 մլն դրամ:

2013թ. հունվար-ապրիլ ամիսների ցուցանիշներով մարզի արդյունաբերության հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռները ունեն այսպիսի տեսք՝

- մշակող արդյունաբերություն 17,087.89 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը՝ 105.6% և տեսակարար կշիռը՝ 81.8%,
- հանքարդյունահանումը համապատասխանաբար՝ 2,715.32 մլն դրամ, 94.4% և 13.0%,
- էլ.էներգիայի արտադրությունը՝ 1,086.05 մլն դրամ, 146.0% և 5.2%:

Նախորդ՝ 2012 թվականի նույն ժամանակահատվածում արդեն նկատելի էին մարզի արդյունաբերության ոլորտի միտումները՝ հանքարդյունաբերության ճյուղի ծավալների աճ, պայամանավորված «Սագամար» ՍՊԸ-ի գործարկմամբ և դրան զուգահեռ մշակող արդյունաբերության ճյուղի տեսակարար կշռի նվազում: Այս տարի այդ միտումը բացակայում է, Արմանիսի ոսկի-բազմամետաղների հանքավայրի շահագործումն ու հանքաքարի վերամշակումն ընթանում է արդեն սովորական հունով: Պայմանավորված հիմնականում արտաքին գործոններով (հարստացված հանքաքարի միջազգային գների տատանում) հանքարդյունաբերության ճյուղի երկու առաջատար ընկերության արտադրական ցուցանիշները անցած 4 ամսում փոքր ինչ զիջում են նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշներին: Արդյունքում կրկին գերկշիռ է մնում մշակող արդյունաբերության ճյուղի տեսակարար կշիռը: Փոխարենը զգալի աճ է արձանագրվել էներգետիկայի ճյուղի ցուցանիշներում՝ 46%-ով աճել է ոչ միայն ճյուղի ձեռնարկությունների կողմից թողարկված արտադրանքի (էլեկտրաէներգիայի) ծավալը դրամային արտահայտությամբ, այլ 31.1%-ով կամ 13.97 մլն կՎտ-ով աճել է էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը բնեղեն արտահայտությամբ: Անցած չորս ամսվա արդյունքներով 15 էլեկտրակայան ավելացրել են էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները: Նշենք, որ մարզում գործում է 25 էլեկտրակայան, որից 24-ը ՀԷԿ-եր են:

2013թ. 1-ին հունվար-ապրիլ ամիսներին մարզի մշակող արդյունաբերության մեջ ըստ ճյուղերի պատկերը հետևյալն է.

(հազ. դրամ)					
	Ճյուղի անվանումը	2013թ. հունվար-ապրիլ	2012թ. հունվար-ապրիլ	աճը (%)	2013թ. հունվար-ապրիլ տես. կշիռը մշակող արդյունաբերության մեջ (%)
1.	Քիմիական արդյունաբերություն	373,388.0	236,177.0	158.1	2.2
2.	Թեթև արդյունաբերություն	280,541.0	263,940.0	106.3	1.6
3.	Սննդի արդյունաբերություն	914,628.0	622,085.0	147.0	5.4
4.	Մեքենաշինություն և սարքաշինություն	352,858.0	800,236.0	44.1	2.1
5.	Փայտամշակում և կահույքի արտադրութ.	12,532.0	11,510.0	108.9	0.1
6.	Մետալուրգիա	15,013,454.0	14,140,323.0	106.2	87.9

7.	Այլ ճյուղեր	140,485.0	106,036.0	132.5	0.8
Ընդամենը		17,087,886.0	16,180,307.0		100.1

Մշակող արդյունաբերության կառուցվածքում շարունակում է գերակշիռ դերակատարություն ունենալ մետալուրգիայի ենթաճյուղը: Նախորդ 2012 թվականին արտադրության ծավալների էական աճ և որպես արդյունք տեսակարար կշռի զգալի աճ ապահովվեց մեքենաշինության և սարքաշինության ճյուղը, սակայն այս տարվա 4 ամիսների արդյունքները (2012թ. հունվար-ապրիլ ամիսների նկատմամբ արտադրության ծավալների ավելի քան 56% նվազում) ցույց են տալիս, որ մեքենաշինության և սարքաշինության ենթաճյուղի ձեռնարկությունների համար լուրջ հիմնախնդիր է արտերկրում կայուն գործընկեր գտնելը, ինչպես նաև ցածր ինքնարժեքի հաստատումը: Նշենք, որ այս ենթաճյուղի ընկերությունների արտադրանքի գերակշիռ մասը արտահանվում է ԱՊՀ երկրներ:

Կայուն գործընկերների և սպառման շուկաների գտնելը արդեն ավելի քան 7 տարի է ինչ հիմնախնդիր է հանդիսանում մարզի թեթև արդյունաբերության ձեռնարկությունների համար: Ներկայումս ենթաճյուղի ձեռնարկություններից երեքն աշխատում են իրենց հզորությունների 10÷20%-ի սահմաններում: Բացառություն է հանդիսանում թերևս «Գլորիա կարի ֆաբրիկա» ՍՊ ընկերության գործունեությունը, որի ինտենսիվ մարքեթինգային քաղաքականության և ներդրումների արդյունքում ապահովվում է կայուն արտադրական գործընթաց:

2013 թվականի անցած չորս ամիսների արդյունքներով մարզի մշակող արդյունաբերության կառուցվածքում զգալի փոփոխություններ կարող է մտցնել քիմիական արդյունաբերության ենթաճյուղի ձեռնարկությունները, որոնք միասին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ թողարկել են 137.21 մլն դրամի ավելի արտադրանք:

Մարզի առաջատար ենթաճյուղի՝ «Մետալուրգիա»-ի ցուցանիշներն 2013թ. հունվար-ապրիլ ամիսներին կայունացել է, որը առավելապես պայմանավորված է միջազգային շուկաներում գների կայունացման հետ: «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն այս տարվա անցած 4 ամիսներին բնեղեն արտահայտությամբ արտադրել է 630.4 տոննա ավելի կոնվերտորային պղինձ:

2013 թվականի հունվար-ապրիլին մարզի 8 ձեռնարկություններ դեռևս արտադրանք չեն թողարկել (հունվար-փետրվարին՝ 35, հունվար-մարտին՝ 13 ձեռնարկություն): Դրանք հիմնականում այն ձեռնարկություններն են, որոնց աշխատանքը կապված է սեզոնային գործոնի հետ, մասնավորապես անտառտնեսությունները:

2013թ. հունվար-ապրիլ ամիսների արդյունքներով մարզի արտադրանքի ընդհանուր ծավալում զգալի տեսակարար կշիռ ունեն Ալավերդու «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն՝ 71.42% (փետրվարին՝ 79.86%, մարտին՝ 75.43%), «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն՝ 7.77% (փետրվարին՝ 6.17%, մարտին՝ 6.87%), «Սազամար» ՓԲԸ-ն՝ 4.94% (փետրվարին՝ 4.27%, մարտին՝ 4.66%), «ԱՏ Գրեյն» ՍՊԸ-ն՝ 2.36% (փետրվարին՝ 0.63%, մարտին՝ 1.82%), «Ձորագետ-հիդրո» ՍՊԸ-ն՝ 2.33% (փետրվարին՝ 1.37%, մարտին՝ 1.78%), «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ն՝ 1.33% (փետրվարին՝ 0.84%, մարտին՝ 1.29%): Չնայած ոչ մեծ ծավալների, բայց զգալի է «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ի տեսակարար կշռի նվազման միտումը:

Ըստ տարածաշրջանների 2013 թվականի հունվար-ապրիլ ամիսներին թողարկված արտադրանքի ծավալն ընթացիկ (գործող) գներով ունի այսպիսի տեսք.

Տարածաշրջանի անվանումը	2013թ. հունվար-ապրիլ	2012թ. հունվար-ապրիլ	Աճը		Տեսակարար կշիռը (%)
			Բացարձակ	(%)	
Սպիտակ	562,742.0	318,081.0	244,661.0	176.9	2.69
Տաշիր	139,041.0	112,962.0	26,079.0	123.1	0.67
Գուգարք	748,541.0	510,362.0	238,179.0	146.7	3.58
Ստեփանավան	1,246,603.0	1,499,278.0	-252,675.0	83.1	5.97

(հազ. դրամ)

Թումանյան	16,789,964.0	15,802,736.0	987,228.0	106.2	80.38
Վանաձոր	1,402,365.0	1,557,657.0	-155,292.0	90.0	6.71
Ընդամենը	20,889,256.0	19,801,076.0	1,088,180.0	105.5	100.00

2013 թվականի հունվար-ապրիլ ամիսների արդյունանքերով արտադրության ծավալի նվազում են արձանագրել Ստեփանավանի՝ 16.9%-ով («Սազամար» ՓԲԸ-ի արտադրության ծավալների նվազում) և քաղաք Վանաձորի՝ 10.0%-ով (քաղաքի մեքենաշինության ու սարքաշինության 3 ընկերությունների արտադրության ծավալների անկում) արդյունաբերական ձեռնարկությունները:

Վերջին 12 ամսվա ընթացքում առաջին անգամ այս տարվա ապրիլի արդյունքներով մարզի Տաշիրի տարածաշրջանի ձեռնարկություններն արտադրության աճ են գրանցել, որը հատկապես պայմանավորված է հայաստանյան նեքին շուկայում պանրի պահանջարկի աճով:

2013 թվականի հունվար-ապրիլ ամիսներին արդյունաբերության ցուցանիշները բնեղեն արտահայտությամբ ըստ 22 հիմնական արտադրատեսակների հետևյալն են՝

	Արտադրանքի անվանումը	Չափի միավորը	2013թ. հունվար-ապրիլ	2012թ. հունվար-ապրիլ	Բացարձակ աճը
1.	Էլեկտրաէներգիա	մլն. կվտ.ժամ	62.3	50.6	11.7
2.	Էլեկտրաշարժիչներ	հատ	860	1410	-550
3.	Ավտոգենային սարքավորումներ	հազ. հատ	45.0	78.0	-33.0
4.	Տրակտորներ	հատ	0	33	-33
5.	Պղինձ՝ պղնձի խտանյութում	տոննա	583.2	544.4	39.1
6.	Ցինկի խտանյութ	տոննա	1363.0	1386.0	-23.0
7.	Պղինձ կոնվերտորային	տոննա	3942.4	3312.0	630.4
8.	Պղնձի խտանյութ	տոննա	3574.0	3540.7	33.3
9.	Սինթետիկ կորունդ	կգ.	3485.4	2727.0	758.4
10	Լաքաներկանյութեր	տոննա	39.9	12.5	27.4
11	Լվացող, մաքրող և օսլայող միջոցներ	տոննա	232.0	211.0	21.0
12	Շինավիպտ	տոննա	15.5	76.7	-61.2
13	Պատանյութեր	տոննա	640.4	636.0	4.4
14	Ե/բետոնյան իրեր և կոնստրուկցիաներ	տոննա	1681.9	1354.0	327.9
15	Ոչ հանքային շինանյութեր	տոննա	11436.6	1481.0	9955.6
16	Ալյումինե մետաղապլաստ դռներ, պատուհան.	հատ	159	62	97
17	Կուրտկաներ, տաբատներ, կոմբինիզոններ	հազ. հատ	34.5	29.5	5.0
18	Պանիր	տոննա	49.4	71.4	-22.0
19	Հաց	տոննա	542.9	666.7	-123.8
20	Կաթնամթերք (թթվասեր, կաթնաշոռ, մածուկ, թան)	տոննա	42.8	34.5	8.3
21	Հրուշակեղեն	տոննա	33.1	21.8	11.3

22	Մակարոնեղեն	տոննա	10.3	16.0	-5.7

Ըստ մարզային վիճակագրական տվյալների 2013թ. հունվար-ապրիլ ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ, չնայած ԱՊՀ երկրներ արտահանման ծավալների 32.11% նվազման, 20.0%-ով աճել է արտահանման ծավալները, որը պայմանավորված է միջազգային շուկաներում գների կայունացմամբ: